

Սրբազան Գահը օգնութեան ձեռքը պիտի կարկառէ, Լուսաւորաց պաշտելի Աթոռը սատար և նեցուկ պիտի լինի, անելով հարկ եղած տնօրէնութիւնները և զիրացնելով ամուսնութեան արտաքին բոլոր ձեւերը, կուզեմ ասել աւելորդ ծախսերը Աստ հարկէ չմտածաւ թէ այս կէտի նկատմամբ մեզ քիչ օգուտ տաւ չեն բերեր, Հայ հասարակութեան մէջ նշանակութիւն և ազդեցութիւն ունեցող ամեն կարգի և կոյուսի անձինք, եթէ հաճին օրինակ լինել թէ ամուսնութեան և թէ ուրիշ կէտերի համար սահմանուած աւելորդ ծախսերի բարձման, որոնք ըստ մեծի մասին և քիչ բացառութեամբ դժբախտաբար չաւայութեանց և զեղխութեանց զաղափար տուողներն են:

Յաւիք Գ. Կարապետեանց.

ՕՐԻՈՐԴԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԳՊՐՈՑ ԵՐԿԱՅՆԱՐԱՋՈՒԿ

ԱՐԴՈՒԹԵԱՆՑ ԱՂԷՔՍԱՆԳՐԱՊՈԼՈՑ.

Խաբաբոյ-Լեւան Աբարտի ամառայն.

Ընտոյս քսանին բաղդի հրաւիրմամբ պատահելով Աղէքսանդրապօլ լսեցի զանգակների քաղցր ձայները՝ որոնք որ հրամայումէին քաղաքի ազգայնոց երկու սեռին էլ մեծից մինչև փոքրը դիմել նորակառոյց Սուրբ Նշան եկեղեցին, որոնց հետ ի միասին հարկը ինձ էլ ստիպեց գնալ, բայց ամենքն էլ առհասարակ ոգևորուած էին միևնորանշան աշխուժով, մեծի և փոքրի երեսին անպատիւի ուրախութեան ժպիտներ էին փայլում, մէկ կողմից էլ «մերձ է զարուն, աւետող օրը պատասխանումէր նոցա իւր բարեխառն հայաջրով, և այսպէս իւրաքանչիւր կողմից զուարճալի տեսարաններ կազմելով՝ կարճես արարազործութեան ամենափառաւոր օրերից մինը լինէր, ուշադրութիւնս գրաւեց իւր վերայ ցայն աստիճան, որ առանց զանդաղելոյ շտապաւ մտնեցայ բարեկամիս մէկին իմանալու այս տարապայման ուրախութեան պատճառը, և ահա անդէն պատասխանին, չնս դիտեր Օրիորդաց զպրոցի առաջին տարեդարձի հանդէսը կրկնատարնէ, ո՞ր մեծի բարեբաղդութեանս, ուրեմն աճապարեմ՝ մտանել յեկեղեցին, յորում դեռ նոր պէտք է սկսուէր սուրբ պատարագը. խառն բազմութիւնը ընդմիջեցաւ, մտաւ յեկեղեցին Յաջորդ Հայր Սուրբը, յետոյ աշակերտուհիքը զոյգ զոյգ պատկառելի իմն շարժմամբ պատուելի ուսուցչաց և պարկեշտասուն ուսուցչուհոյ առաջնորդութեամբ կարգով կանգնեցան յԱտեան դրպիրներու տեղակ երգելու, և սկսաւ սուրբ պատարագը, Պատարագին էր նոյն ինքն Յաջորդը՝ Աղա փրկանց բարեշնորհ Հայրը, որ հրաւիրանօք Հոգարարութեան առանձին իմն փառաւորութիւն էր տուել հանդիսին, մանաւանդ թէ որովհետեւ առաջին անգամն էր որ կ'ոտնէին Աղէքսանդրապօլու ժամասեր Ազգայինք օրիորդները սուրբ պատարագին զպրութիւն անելը, ուստի ջերմեռանդու-

թեամբ մոմեր առած ամենքն էլ կ'դիմէին, և իրաւ շատ զեղեցիկ և սրտաշարժ կերպէին իւրեանց մատաղ հասակին և իգական սեռի ներդաշնակ ձայներուն համապատշաճ, էլ որ ապառաժ սիրտ կարող էր անդէն լսել իւր ջերմ արտասուաց կաթիլները մինչդեռ հրեշտակական ներդաշնակութեամբ կրկնէին սրբազան երգոց անուշութիւնքը, որոնք մերթ ուրախութեան և մերթ տխրութեան զանազան զգացմունքներ էին պարգևում ծովացեալ բազմութեան սրտերին:

Պատիւ եմ համարում աստանօր չըմողով լուծութեան նա և Նորին բարեշնորհ Հայրութեան սուրբ Պատարագի վերջում արած ազդու ատենաբանութիւնը, որի բովանդակութիւն էր հրաւիրել ժողովրդոց բազմութեան ուշադրութիւնը դէպի իւրեանց բարերարին երկայնաբազուկ Արղուութեանց հանգուցեալ Ղահրաման իշխանի անմահ մեծագործութիւնը և տալ ճանաչել նորա մեծակրօն երախտեաց հաւաստիքը Աղէքսանդրապօլու ազգայնոց վերաբերութեամբ, որ նա ինքն բարեբար իշխանը հաճել էր իւր Աստուածահաճոյ նուիրանաց զոհարելութեամբ, բաց ի նպատակոյ վեց հազար ուրբաւ շինութեան նոյն Սուրբ Նշան եկեղեցոյն՝ տալ հիմնել Աղէքսանդրապօլում սոյն Օրիորդաց զպրոցը տեղւոյն հասարակութեան ներկայ և ապագայ սերնդոց կեանքը բարեբերութեամբ, մտաւորական և բարոյական յառաջադիմութեանց նկատմամբ, նմանեցնումէր սուրբ Հայրը այդ անմահ բարերարին իւր մեծագործութեամբ իբրեւ գանձի ծածկելոյ յազարակի գեղեցիկ բացատրութեամբ և իմաստալից խօսքերով հաւաստիացնումէր թէ արդարեւ երջանկալիշատակ հանգուցեալ իւր առաքինական և ազգասիրական ըզգացմունքը իբրեւ պատուական գանձ ի վաղուց հետեւ ծածկած ունենալով իւր ազգայնամ սրտի մէջ՝ ահաւաստիկ հանեալ զայն կրաշիւն Ազգային ուսումնակարօտ մանկուհեաց, որով կապացուցանէ իւր արժանաւոր ժառանգ լինելը այն արժանալիշատակ քաջագոր իշխանաց երկայնաբազուկ Արղութեանց Տոհմին, որոնց սիրալի մեծագործութեանց երախտալից արձագանքը շատ գրեթե ողջունած է և դեռ կողջունել. ի վերջոյ մաղթելով յերկնից հոգւոյ փրկութիւն հանգուցեալ բարերար իշխանի և համայնից հանգուցելոց քաջահոգի Տոհմին Արղութեանց, բարերարութիւն ազնուափայլ Տիկնոջ նորա և պատուելի կտակակատարաց բարորութեան շատ օրեր, և օգոստափառ ինքնակալ Այսյեր կենաց երկարութիւն, որոյ հզօր հովանաւորութեան ներքոյ կամք բարեպէս և կվայելիմք անդորրութեան զրօշակաւ ոչ սակաւ ազատութեան առանձնաշնորհութիւն ի մտաւորական զարգացումն, կնքեաց ատենաբանութիւնը և վեր եկաւ Սեղանից Սուրբ Հայրիկը՝ Որ օրհնես զայնօրիւր անկողով. և սկսեցին միաբանութեամբ եկեղեցական ուխտի կատարել հոգեհանգիստ պատշաճաւոր մաղթանքներով յանուն հանգուցեալ բարերարի

Արդութեանց, և զայն ևս աւարտելուց յետոյ գալով եկեղեցիէն դիմեցին Հանդիսականաց բազմութեամբ Օրիորդաց դպրոցը, ուրանօր պատրաստեալ կար սեղանը զանազան խորտիկներով, և յառաջագոյն հրաւիրուած էին Հոգաբարձուաց առանձին հրաւիրագրերով յամենայն կարգից երեկի անձինք, բարեգործ և բարեգործուհի անդամք, պատգամաւորք հասարակութեան կողմից, ուսուցիչք և ուրիշ պաշտօնական և պատուելի քաղաքացի պարոններ զանազան ազգաց, ամենքն բոլորելով սեղանը նախագահութեամբ բարեշնորհ Հօր իւրեանց՝ ուշադրութիւնը դարձրած էին մատաղեքամ աշակերտուհեաց վերայ, որոնք կանգնած էին սեղանի հանդէպը ընդմիջելով բարեգործուհեաց խումբը շրջապատող հանդիսականներէն, ամենքի ձեռք վառած մոմեղէններով յոյժ պատկառելի կերպով կանգնած միատեղ՝ ամեն մէկ աշակերտուհեայ երեսին առանձին առանձին շնորհաց նշոյլներ կրփայլէին. առաջ երգեցին մի քաղցր երգ, երգը ընդմիջելով կարգաց ձառք ի դիմաց բոլոր աշակերտուհեաց Օրիորդ Զարդալամ Սէյլանեանցը. յետոյ երգեցին մի երգ ևս. նոյնպէս կարգաց մի ձառք բերելուամիայլ ուսուցչուհի միանգամայն և վերակացուհի Օրիորդաց Դպրոցին Տիկին Զարուհի Գիւլումեանցը, նրանից յետոյ Պ. Ա. ազար Աղա-յեանցը կարգաց ուշադրութեան արժանի մի կարի ազգու ձառք, յետոյ համառօտ հաշուեցուցակը տարեկան մտից և ծախուց Դպրոցին, հուսկ ապա մի քանի ազգային սրտաշարժ երգեր ևս երգեցին Օրիորդները. Սուրբ Հայրը օրհնելով զսեղան և բոլոր հանդիսականները՝ սկսեցին սեղանը վայելելու, սեղանի վերայ ոչ սակաւ բաժակներ դարտակուեցան էղջէներ բարձրացնելով իւրաքանչիւր բաժակի առաջարկութեան վայրկեանում, ամենաջերմեռանդ հոգւով հայցում էին յերկնից երկար կեանք հանդերձ բարօրութեամբ շատ օրերով Օգոստոսիառ Այստեր կենաց և իւր ծիրանածին զահաժառանգներու և Վովկասեան փոխարքայի Թագաւոր և մեծ իշխանի կենաց, մանաւանդ Ազգախնամ մեր Ա-Յափառ Հայրապետին թանգակին կենաց, որ իւր ուսումնասէր պաշտելի յատկութեամբ անմուռաց ունի ի սրտի զդպրոցս Օրիորդական՝ որպէս և բոլոր ուսաբնակ Հայոց, խնամելով իւր ազգասէր Հովանաւորութեան զրօշակաւ, նաեւ վասն փրկկութեան հոգւոյ այն անմահ բարերար իշխանի երկայնաբազուկ Արդութեանց և ազնուամիայլ կենաց իւր կտակակատար բարեպաշտից և բարեպաշտուհեայն. Դպրոցում՝ եղած ընծայաբերութիւնքը ՚ի զանազան անձանց կ'հասանէր մօտ հարիւր բուրլի արծաթ:

Ա. երջիշեալ ձառք և համառօտ հաշուեցուցակը նամակիս հետ նուաստաբար առաքելով խմբագրութեանդ՝ պատիւ ունիմ խնդրել հիւրընկալելու հաճոյքը պատուական ամսագրոյդ իւր հոյակապ թերթերում ձառնելու հետ ՚ի միասին, և

իմ յետագայ զգացմունքս հաղորդել իմ սիրելի հայրենակիցներուն յուրախութիւն և ի բերկրանս ուսումնասէր սրտից. երջանիկ օրուանս թանկագին ժամերում արտայայտեալ փրկանքում տպաւորել էր մտացս մէջ երկու զգացումներ միմեանց հակառակ, ահա թէ ի՞նչ են նորա, մինը փառաւոր հանդիսի վայելչապէս կատարումը յանուն առաջին տարեդարձի սկզբնաւորութեան յիշեալ Դպրոցին Օրիորդաց, որոյ վայելման արժանացած լինելով բաղդի բերմամբ՝ փոքր ՚ի շատէ ծանօթացայ ներկային, և հաւաստի եմ թէ՛ որովհետեւ Դպրոցը ունեցել է իւր պատշաճաւոր ընթացքը շնորհիւ արիաջան ուսուցչաց և պատուելի հոգաբարձուաց, և արդէն ցոյց է տալում համապատասխան լինելը իւր անմահ բարերարի սուրբ նպատակին. իսկ ապագայի համար, իմ տկար երեակայութեանս միջում՝ ինչպէս թանձր մթութեան հետ մի աղօտալի լուսոյ փայլիւն որպէս թէ կոյրի ձակատը լոյս տալոյ լինի՝ գուշակվում մի լուսաւոր և շատ օգտաւետ գաղափարներու գարուն, որը անտարակոյս պիտի պողաբերէ իւր ժամանակին՝ ուսման կենդանի տաճարներ խեղճ Հայկազունեաց կատարեալ մարդիկ նուիրող արժանաւոր մայրեր, որոնք իբրեւ զօրեղ ձեռքեր թերեւ կարող կ'լինին սրբել տառապեալ ազգիս արտասուները, ջնջել դժբաղդ Հայաստանի սգաւոր հոգւոյ վերայէն այն անողորմելի սեւ ճակատագիրը, և փարատել նորա բազմադարեան վշտերը. դառնալով միւս զգացմանս վերայ՝ ո՛հ սարսափում մ յիշել այդ գեղեցիկ սեռի բոտ մեծի մասին մինչև ցարդ սեպհականեալ այն ողորմելի վիճակը, այն սարսափելի տխուր կերպարները, որոնք թէպէտ իբրեւ մարդ գիւղ՝ քաղաք բնակելով բոլորովին անտարբեր վայրենիներ, անձանօթ է մնացել իւրեանց մութ գաղափարները իբրեւ մի յերկնային էակէ, այն չքնաղ անդորրութիւնից և աշխարհաշէն խաղաղութիւնից անգամ չձանաչելով իսպառ թէ ի՞նչ նշանակութիւն ունի մեր ընտանեկան կեանքի վերան խաղաղ և անդորր նիստ ու կացը, թող միւս այլ մեր կենաց վերաբերեալ կարեւոր սկզբունքները, բարոյականութեան, Աստուածապաշտութեան, տնտեսական կառավարութեան և ին և ին. այդօրինակ մեռեալ արգանտից որ կենաց յոյսը ծնանելու ակնկալէք կը մնայ մեզ, որը յայտնի բաց է արեւ մեր յառջեւ մահու գերեզման. սոցա դժոխային ստուերով ներկած կերպարները մանրամասնաբար նկարագրելոյ առժամ հարկ չ'կար, կ'թողնէր ուրեմն նրանց՝ որոնք աւելի յարաբերութիւն ունին մեր ժողովրդական կեանքի հետ, այլ այսու ամենայնիւ մեր զգացումները միմեանց հետ բաղդատելով՝ յայտնի խոստովանվում մ իմ տկարութիւնս՝ որ չեմ կարող չափել այն բարերար իշխանի անմահ մեծագործութեան արժէքը՝ որն որ ահաւասիկ իւր բարձր նշանակութեամբ բարդել է Աղէքսանդրապոլու ազգայնոց վերայ մեծ երախտիք, և կ'ըրոյմէ նոցա

